ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

ք. Երևան, Մամիկոնյանց 46/5

«25» 12 2018թ.

N 08/18-203-18

«ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ի
տնօրեն՝ Հ. Ավետիսյանին
/Հասցե՝ ք. Երևան, Վարդանանց 8
էլ. հասցեն argohshin@mail.ru/

Հարգելի պարոն Ավետիսյան,

ՀՀ քննչական կոմիտեի և «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 07.05.2018թ կնքված N ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-ՄՇ-18/1.1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.3 կետի և N 2 Հավելվածով սահմանված օրացուցային գրաֆիկի համաձայն մինչև 05.10.2018թ.-ը Ընկերության կողմից պետք է իրականացվեին Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված Ծավալաթերթ-Նախահաշվով նախատեսված ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի քննչական բաժնի շենքի հիմնանորոգման աշխատանքները:

Հիմք ընդունելով Պայմանագրի 8.6 կետի պահանջները Պայմանագրի ժամկետը երկարաձգվել է 30 օրացուցային օրով մինչև 02.11.2018թ, սակայն մինչ օրս շինարարական աշխատանքներն Ընկերության կողմից չեն կատարվել ամբողջությամբ:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետի ա) ենթակետի պահանջները՝ ՀՀ քննչական կոմիտեն 2018 թվականի դեկտեմբերի 21-ից միակողմանի լուծել է պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումն ստանալուց հետո 5(հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական թիվ 900005028106 հաշվեհամարին փոխանցել **59393 (հիսունինը հազար երեք հարյուր իննսուներեք)** ՀՀ դրամ որպես տուգանք՝պայմանագրի 6.3 կետի պահանջներին համապատասխան (համաձայն Պայմանագրի 5.1 կետում նախատեսված Պայմանագրի մնացորդային գնի 0.5 տոկոսի չափով) և ՀՀ Ֆինանսների նախարարության գանձապետական 900005000758 հաշվեհամարին փոխանցել **1187865 (Մեկ միլիոն մեկ հարյուր ութսունյոթ հազար ութ հարյուր վաթսունհինգ)** ՀՀ դրամ գումար որպես տուժանք՝ Պայմանագրի չկատարված գնի 10 տոկոսի չափով:

Հարգանքով՝ **Ա. Նիկոյան**

Կատարող՝
Հեռ.011 880 124